ծանր հիվանդութուն: Բայց փոխանակ բժշկվելու  
նա շարունակում է աշխատել տպարանում: Յեռան-  
դուն կերպով պարապում է, վորպեսզի բարձրացնի  
էր գիտելիքների ու կուլտուրական մակարդակը: Դրա  
հետ միասին, նա շարունակում է Բազմում հրա-  
տարակիվող «Մոլլա Նասրեդդին», «Գյունեչ», «Մոլի-  
ցե» ժուռնալներում տպագրել իր յերգիծանքները:

Բայց հիվանդութունը բարդանում է: Սարիբը  
գնում է Թիֆլիս բժշկվելու, «Մոլլա Նասրեդդինի»  
խմբագիրը և բարեկամները նրան վորոչ ողնութուն  
են ցույց առալիս, բայց ապարդյուն: Չհամաձայնվե-  
լով ոպերացիա անելու մասին բժիշկների առաջար-  
կությանը, Սարիբը 1911 թվին վերադառնում է Շա-  
մախի, վորտեղ և վերջին բժշկական ողնութունը  
նրան հասցնում է Սիհեթը:

Խիստ կարիքը տանջում է հիվանդ Սարիբին:  
«Մոլլա Նասրեդդինը» № 15-ում գրում է բոլոր ըն-  
թերցողներին՝ ողնել հիվանդ պոետին: Անդրկովկա-  
սի և Թուրքեստանի դանադան անկյուններից ստաց-  
վում են հանդանակած գումարներ: Բայց Բազմի մի-  
լիոներները վոչ մի կոպեկով չցանկացան ողնել մեծ  
պոետին:

Սարիբը մեռավ 1911 թվի հուլիսի 25-ին յերի-  
կամունքների հիվանդութունից, Շամախի քաղա-  
քում:

Սիհեթը հասկանալով պոետի ամբողջ նշանակու-  
թյունն ու մեծութունը նրա մահվան առթիվ գրեց  
հետևյալ մատանավորը.—

Դու մի վշտանա, ցավիլդ դիմացիբ,  
Ձի անցնի յերկար, դու լավ իմացիբ,  
Արձան կկանգնեն անրունդերը քեզ  
Յեկ կամահանա անունը քո վես:

Սիհեթը չսխալեց: Հոկտեմբերյան մեծ հեղա-  
փոխութունը լենին-ստալինյան կուսակցության ղե-  
կախարությամբ արժանի կերպով գնահատեց Սարի-  
բին:

Նոր իդեալը, ձգտումներն ու հույսերը կենսա-  
գործվեցին Ադրբեջանի աշխատավորության կողմից,  
փորին ամբողջ հողավ սիրում էր Սարիբը, փորի հա-  
մար նա ապրեց, աշխատեց, փուլեց և տանջվեց: 1922  
թվին խորհրդային իշխանութունը Բազմում կանգ-  
նեցրեց Սարիբի արձանը: Մի չարք դպրոցներ, յոր-  
ջաններ, փողոցներ, դրադարաններ կոչված են նրա  
անունով: Բանաստեղծի գործերը հրատարակված են  
մատասյական տիրաժով, նրանք թարգմանվում են  
ԽՍՀՄ-ի ժողովուրդների լեզուներով: Ադրբեջանի  
աշխատավորները մեծ հետաքրքրությամբ և սիրով  
կարդում են նրա յերգիծանքներն ու բանաստեղծու-  
թյունները:

Սարիբը մեր բանաստեղծն է: Նա պատկանում է  
Ադրբեջանի աշխատավորությանը:

Սարիբի մահվան 25-ամյակի աննշությամբ,  
կուսակցության և կառավարության առաջարկու-  
թյամբ, Ադրբեջանի Ժողկոմխորհին կից կազմակերպ-  
ված է պոետի մեծարումն անցկացնող հանձնաժողով:

Այդ հանձնաժողովի վորոշմամբ Բաղվում  
կանգնեցվում և պոետի բրոնզե արձանը, իսկ  
մի այլ արձան դրվելու յե Շամախում — պո-  
ետի հայրենի քաղաքում: Պատրաստվում և «Հոս-  
հոս Նամեյի» ակադեմիական հրատարակութունը:  
Նույնամ բացված դրամատիկական թատրոնը կոչված  
ե պոետի անունով: Բացի դրանից, մի շարք միջոցա-  
ռումներ են կատարվում պոետի հիշատակը հավեր-  
ժացնելու համար:

Սարբրի ձգտումներն ու հույսերը, իդեալները  
կարող եյին կենսագործվել միայն պրոլետարական  
դիկտատուրայի դարաշրջանում, մեծ ստալինյան դա-  
րաշրջանում, չնորհիվ լենին-ստալինյան ազգային  
քաղաքականութեան հաղթանակի:

Սարբրը գիտակցել և իր արժանիքը և հավատա-  
ցել իր անմահութեանը:

Այնպես ամուր և ինձ շրջապատել չար  
վոր յես նման եմ խենթ ուղիւնստում խոյազած  
Ինչո՞ւ վշտանալ, թող ժամանակը թաղի ինձ  
Յես կհեռանամ, բայց մտքերն իմ վառ կմնան  
հավեր:

Յեվ իսկապես Սարբրին անհնար և մոռանալ:

Այսոր մեր յերկրում, սոցիալիզմի լիակատար  
հաղթանակի ետոխայում, մենք ավելի յենք հիշում:  
Սարբրին և ավելի ջերմորեն սիրում նրան:

## Ս Ա Բ Ի Ր Ի ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

# ԲԵՅՆԵԼՄԻԼԵԼ\*)

ՀԱՅ ՅԵՎ, ԹՈՒՐԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՍ

Յերբ մեր դարը պահանջում է յետքայրություն սրբազան,  
Յերբ բոլորս ցանկանում ենք մի խնդազ կյանք անբաժան,  
Յերբ մեր հողում բնավ չկա վոչ մի պատճառ զժառության,  
Զառակները մեր ախ յերկրի լի յեն քենով մի դաժան, —  
Հայի, թուրքի սրտերի մեջ սերմ են ցանել չարության,  
Մի՞թե չկան հերոս մարդիկ՝ դաշինք կապեն միության:

Ո՛ր զխուճներ, հանդէս յեկեք, այսօր — ո՛րն է վեհ կոչի,  
Լինենք յեղբայր մենք մտերիմ, թշնամա՛նքը թող կորչի:

Յերկու դրժից, յերկու ընկեր, յիրարու միշտ բախտակից,  
Զառակները հենց նո՛ւյն հողի՝ ապրել են հաշտ, սրտակից,

\*) Բեյնեբմիլել — ինտերնացիոնալ:

Դարեր անվերջ յեղել իրար մտերիմ ու իարեկից,  
Այսօր հանկարծ արյո՛ւն կաթիկց խաղաղ յերկնից ու  
կյանքից,

Տգիտության ու ջնջմանի մասնն և այստեղ լսառնա-  
կիչ,

Գյուղ ու քաղաք յեղան ավեր, տե՛ր իմ, վերկեր չա-  
րիքից:

Ո՛ր գիտուններ, հանդե՛ս յեկեք, այսօր—որն և վե՛հ  
կոչի,

Լինենք յեղբ ա՛յր մենք մտերիմ, թշնամանքը թող  
կորչի:

Ո՞վ սերմանեց այսքան չարիք և ո՞վ նյութեց այս-  
քան դավ,

Չեմ հասկանում, թե ի՞նչ հողմ եր, վոր մեր շուրջը  
բարձրացավ,

Չի՛ կարելի հավատա՛լ, թե մարդու ձեռքով սա ան-  
ցավ,

Հայ ու թուրքի դորձ չե՛ յերբեք, նրանք պատճառ  
չեն բնավ

Յեկ նախճիրը, վոր վա հիմա, սոցիալությամբ այդ  
յեղավ,

Թշնամությունն այս բերում և ժողովուրդին դարդ  
ու ցավ:

Ո՛ր գիտուններ, հանդե՛ս յեկեք, այսօր—որն և վե՛հ  
կոչի,

Լինենք յեղբա՛յր մենք մտերիմ, թշնամանքը թող  
կորչի:

Ճշմարտություն պիտ քարոզել ժողովրդին կեղեքված,  
Բացել աչքերն ու դո՛ւրս բերել նրան կյանքից այս  
ճնջված,

Արևի պես միշտ շողչողալ, ցրել խավարն  
անթափանց,

Յեկ հուշերից հավետ վանել չարությունը ահազնած:  
Բեյնեղմիրելն, ո՛վ դու Սաբիր, յեղբայրության ջահ  
արած,

Աշխատիր միշտ հեռո՛ւ կենալ այս աշխարհից խա-  
վարած:

Թարգ. ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

# ՔԵԶԻՆՍԱՆ ԵՍ ԻՄԱՆՈՒՄ

Փահլա, դու ել աշխարհումս քեզ ինտան ես  
իմանո՞ւմ,  
Անիող գյաղա, մարդ լինելը հանաք բան ես  
իմանո՞ւմ:

Մարդը, ախր, փառք ու պատիվ, ապրելու հալ  
կունենա,  
Մարդը առատ հարստություն, դովլաթ ու մալ  
կունենա,  
Ղեկաբիթն ի՞նչ ա՛ մարդը տներ, ու սիրուն զալ  
կունենա:

Եդ մութ ու նամ ջոխրճիթը աղարանք ես իմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը դու հանաք ես  
իմանո՞ւմ:

Ի՞նչ ունես դու մեջլիսումը—քո խոսքը դիվ ազար ա,  
Մեծերի մոտ դու վոտի կաց, ձեն մի հանի, տաղ  
արա,  
Աղբատ մարդ ես՝ գնա բանիդ, խելքդ գլխիդ սաղ  
արա,

Անհող զուլին հարուստի հետ մի բանակ ես  
իմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը դու հանաք ես  
իմանո՞ւմ:

Ո՞վ ա տվել քեզ իրավունք հարուստի հետ հախասար,  
Այ անամոթ, չես իմանո՞ւմ, վոր կա մեր մեջ ձոր ու  
սար,  
Փող վոր չունես՝ ով կասի թե դու ել մարդ ես, մի  
ինտան.

Անկարելին ելի ծաղըր ու ծանակ ես իմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը դու հանաք ես  
իմանո՞ւմ,

Դնա խիիր դու ջո մուրճը ու ջո դովան իմացի,  
Չեռք քաշիր եդ ջո մտքերից, թեկուզ սով ա՛  
դիմացիր,  
Փահլան ի՞նչ ա հարուստի մոտ — մի տես ով ա  
դիմացիդ.

Մի աբասի որավարձդ քյուր թուման ես իմանո՞ւմ,  
Աղա, ախմախ, մարդ լինելը հանաք բան ես  
իմանո՞ւմ:

Հարուստ մարդը միշտ Փահլայի վախտի տերն ա,  
իմացի,  
Փողավորը ես աշխարհի բախտի տերն ա, իմացի,  
Մեծավոր ա, իշխանության թախտի տերն ա,  
իմացի:



Բախտի անխիղճ թարս և պտտվում հիմի,  
Փահլան ել իրեն մեծ մարդ և հաշվում հիմի:

Դու չխաբվես, աղքատ մարդուն խելք ու շնորք չի  
լինի,

Վորովհետև որինամոր հազուատ քեզ պես նա չունի,  
Կայք չունի ու դովաթ չունի, աբա չունի դաս  
գույնի,

Ունի-չունի մի հին չուխա, մի հատիկ կարպետ ունի:

Բախտի անխիղճ թարս և պտտվում հիմի,  
Փահլան ել իրեն մեծ մարդ և հաշվում հիմի:

Թե ուզում ես լինել անգարդ, լինել հանդիսա  
աշխարհում,

Չընկնել իզուր գիրկը վշտի ու տանջանքի՝  
աշխարհում,

Դու մի նայիր Փահլի դեմքին ու ունդին՝  
աշխարհում,

Դու քո մասին միշտ մտածիր ու քո կյանքի՝  
աշխարհում:

Բախտի անխիղճ թարս և պտտվում հիմի,  
Փահլան ել իրեն մեծ մարդ և հաշվում հիմի:

Տես քո ազգի ցավերը, բայց դու ինքդ դեղ մի  
վնտուիր,

Վորբի ու տկարի համար ապաստան, տեղ մի  
վնտուիր,

Ամենեվին դու չչինես բարեգործության տուն, շենք,  
Ազգիդ խեղձին դու չհիշես, չանես նրա սիրտը շին:

Բախտի անխիղճ թարս և պտտվում հիմի,  
Փահլան ել իրեն մեծ մարդ և հաշվում հիմի:

Թարգմ. ԳՐԱՇԻ

# Ա Ք Ի Ն Չ Ի

Ել մի գցի ձենդ յերկինք, ադա, աքինչի,  
Աղվեսի տեղ քեզ մի դնի, դյադա, աքինչի:

Ամեն որ մի պատրվակով ի՞նչ ես մաշում իմ դուռը,  
Վիզդ ծոած աղտոտում ես ձմեռ-աշուն իմ դուռը,  
Ի՞նչ ես գալիս գլխիդ տալով, լալով քաշում իմ  
դուռը:

Շաշ մի լինի, պատիվ պահիր, ադաք, աքինչի,  
Չենդ վտրի, մի վնդատա, ադա, աքինչի:

Թե քեզ համար սեվով անցավ ամբողջ տարին—  
իմ ինչ գործ,  
Յերաշտ յեղավ ու չբուսավ վոչ մի գարի—  
իմ ինչ գործ,  
Կոխվն արավ քո բրնձի արտերն արին—իմ ինչ գործ:

Ինձ ինչ թե քո գործը յեղավ բադա, աքինչի:  
Իզուր տեղից մի վնդատա, ադա, աքինչի:

Ունեցածդ կարկուտը սեվ սրբեց տարավ—ինչ անեմ,  
Թե մորեխը քո բոստանը ավեր արավ—ինչ անեմ,  
Պարտքատերը թե քո մանկան վերձակն առավ —  
ինչ անեմ:

Ծախիւր վերջին փախտադ ել, աղա, աքիւնչի,  
Ձեռք կտորի, գլխիս մի դառ զաղա, աքիւնչի:

Ինձ ինչ թե դու չարչարվում ես, շատ աշխատում,  
քիչ ուտում,

Ձահանդամը թե մեռնում ես դու անոթի ու անտուն,  
Քո աչքերի լույսից թեկուզ ցորեն հանիւր բեր ինձ  
տուր:

Չալթուկ ել բեր, ցորեն, դարի, հայրա, աքիւնչի,  
Թե չե կաշիդ յես կմաշկեմ, աղա, աքիւնչի:

Քանի կուզե՛ս ասա չունեմ, կյանքիդ դնով կստանամ,  
Լացակումած աչքերը քո յես հանելով կստանամ,  
Վսկորնեբդ ու մարմինդ ջուր անելով կստանամ:

Քո ճարը տես, թե չե բանդ վատ ա, աքիւնչի,  
Իգուր տեղից մի վնգատա, աղա, աքիւնչի:

Գեղջուկ մարդ ես, ցորենն ինձ տուր, դու կոչտ քարն  
եւ կլափես,  
Սոված մնաս ձմեռն ամբողջ, ձյունի սարն եւ կլափես,  
Քարից կակուղ թե բան չեղավ՝ դահրումարն եւ  
կլափես:

Քո բանը չեն միս ու փլավ, աղա աքիւնչի,  
Անատունից ինչո՞վ ես լամ, գյաղա, աքիւնչի:

Իսկ իմ դիրքը, իմ պատիվը հնուց անմահ որենք ա,  
Բեզդաղա յեմ, հանգիստ կյանքը միշտ ինձ համար  
որենք ա,

Առանց գինու յես չեմ ճաշի, դա հո թամամ որենք ա:

Բեզդաղայի հալն ետպես ա, աղա, աքիւնչի,  
Լավ իմացի, կարգը ես ա, հայրա, աքիւնչի:

Թարգմ. ՍԱՄՎԵԼ

# Հ Ա Մ Բ Ե Ր Ի Ր

Թշվառութեան գիրկը ընկար, հաշտըվիր, ով  
անողնակա՛ն, համբերի՛ր,  
Քաղցած ընտանիքիդ առաջ յերեսդ սևանա անդամ,  
համբերի՛ր:

Աղքատութեան գերին դարձար, վողորմելի՛,  
խոնարակա՛ն դու յեղի՛ր,  
Մի՛ աշխատիր, վորեւ գործի մի՛ գնա, անգործ,  
անբան դու յեղի՛ր,  
Դժբախտութեան չարա չկա, լա՛ց, աչքդ թա՛ց,  
արցունքաքամ դու յեղի՛ր,  
Միչտ հե՛ղ յեղիր, միչտ գո՛հ յեղիր, ասել ե թե միչտ  
մուսուրմա՛ն դու յեղիր:

Քո բաժին բերք-հացը կզա, դու ալարա ման յեկ,  
անբա՛ն, համբերի՛ր,  
Թշվառութեան գիրկը ընկար, հաշտըվիր, ով  
անողնակա՛ն, համբերի՛ր:

Կացութեանդ ծանր լինի—հաշտըվիր դու ցավերիդ  
հետ, ով անկա՛ց,  
Անհող յեղիր, անող յեղիր, յեղիր անհույս ու  
ծուլութեան սիրահար,  
Ճակատագիր համարիր ա՛յդ, ապրիր այդպես միչտ  
խայտառակ ու տկար,  
Ողում թռչող մարդուն յերբեք մի նայիր դու  
կարոտով վառ ու անմար:

Թո՛ղ, մի՛ ջանա, փող մի՛ դատիր, մի՛ կպչի՛ր  
գործիդ սեփական, համբերի՛ր,  
Թշվառութեան գիրկը ընկար, հաշտըվիր ով  
անողնակա՛ն, համբերի՛ր:

Թե դուրս գա բռնակալից, բեղից, խանից,—  
վերուստ տրված համարիր,  
Թե վոր սերդ գա հարկ ուղի, դա յերկնքից  
քեզ սահմանված համարիր,  
Թե յեվ ինքդ ես քո խեղճութեան պատճառը միչտ՝  
ճակտիդ գրված համարիր,  
Զախորդութեանը ընկերի ու բարեկամի պատճառած  
համարիր,

Ընկի՛ր վոտի տակ ու ջարդվի՛ր, ու մի՛ փնտիր  
դրան դարման, համբերի՛ր,  
Թշվառութեան գիրկը ընկար, հաշտըվիր,  
ով անողնակա՛ն, համբերի՛ր:

Թե եդ բանից շատ ձանձրանաս, նստիր տխուր,  
նստիր ու անհագ դու լա՛,  
Ուրիշ միջոց մի՛ վորոնիր, այդպես ահա, տանջվիր  
չարունակ, դու լա՛,  
Սաղ աշխարհքից ձեռք քաշի դու, համ աշխար լա՛,  
համ ել միայնակ դու լա՛,  
Թող կուրանա աչքդ, միտքդ, մի՛ մտածիր, մի՛ տես,  
աչքդ փակ դու լա՛,

Թքի՛ր քո նամուտի վրա, մի՛ քաջվիր դու,  
կրկին անգամ համբերիր,  
Թշվառութեան գիրկը ընկար, հաշտըվիր,  
ով անողնակա՛ն, համբերի՛ր:

Սակայն յեթե վորևէ գործ ուղես անել,  
մուսուլմանի պես դատիր,  
Հողատիրոջ ճնշումը տար համբերությամբ,  
դու հայրանի պես դատիր,  
Վարի՛ր, ցանի՛ր, հնձի՛ր բերքդ՝ բեկը տանի,  
խեղճ ինսանի պես դատիր,  
Մի՛ արթնանա, մի՛ հասկանա իրավունքդ,  
խեղ անդանի պես դատիր:

Մի՛ դարդոտովիր, մի՛ նեղանա, ցավերդ տար  
լուռ ու անկամ, համբերիր,  
Թշվառության դիրկը ընկար, հաշտովիր,  
ով անողնական, համբերիր:

Յեթե շատ, քիչ դեյրաթ ունես, դու անհավատ  
մարդկանց յերբեք մի՛ նայիր,  
Մի հեշտ գործով գրադվելով, մի ուրանա զո հավատը  
յերկնային,  
Մանուկներին համար հաց դուրս գա ասելով,  
դու տիրոջ տունը մի՛ քայքայիր:  
Մեղքը վիզս, պնա Փահլայյութուն արա, իզուր տեղը  
մի՛ վայիր,

Գործատերը թե փող չտա, կրակում վառվիր  
հուր-հավիտյան, համբերիր,  
Թշվառության դիրկը ընկար, հաշտովիր,  
ով անողնական, համբերիր:

Կամ ջանումդ յեթե ուժ կա, զորություն կա յեթե  
զո մեջ, զո սրտում,  
Ձեռքդ զորեղ, յերեսդ վարդ, հոգիդ դարդից զուրկ է  
բնավ ու խնդուն,—  
Միանգամից վերջ տուր բոլոր զո ցավերին, զո  
դարդերին անհասնում,  
Դառն անագնիկ, եղ ել մի մեծ արհեստ ե հեշտ,  
տեսրբեր արվեստից իմաստուն,—

Ճրգմի՛ր ու ն'ն, մորթի՛ր ու ա'ն, զարկի՛ր ու ա'ն,  
լծվիր սրին, պարծեցի՛ր,  
Հենց վոր մի որ հասնես պատվի աստիճանին,  
իշխաններին, պարծեցի՛ր,

Հարի՛ր դու վոճրագործներին, պարծեցի՛ր,  
Խառնի՛ր ամեն չար դործերի, պարծեցի՛ր,  
Մի՛ տնենա ել վոչ ամոթ, վոչ նամուս,  
Աբուռդ տո՛ւր շուն ու գելի, պարծեցի՛ր:

Թարգմ. ԳՐԱՇԻ

# ԻՆՉԻԴ ԵՅԻՆ ՊԵՏՔ, ԱՍՏՎԱԾ...

Մեր աշխարհի ես քարասիրտ մարդուկները ինչիդ  
եյին պետք, աստվա՛ծ,  
Ասա տեսնեմ, մեզ մոտ ես ասու արյունները ինչիդ  
եյին պետք, աստվա՛ծ:

Անամոթությունը արդեն ավելացավ, ժողովուրդը  
դարձավ հլու, հնազանդ,  
Ամեն զուլումի դիմացող հոգիները ինչիդ եյին պետք,  
աստվա՛ծ:

Այն ժամանակ, յերբ ել ազնվություն չկա ու  
բարություն վամեցող՝  
Յես չգիտեմ այդպիսի ժամանակները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Թե խեղճերի արտասուքը մի որ ել ծով եր դառնալու  
անհատակ,  
Ել ծովերը, ել են ովկիանոսները ինչիդ եյին պետք,  
աստվա՛ծ:

Թե վոր կեղեքիչ վորսկանը՝ խիղճ, գթություն չեր  
ունենա բնավին,  
Ել են սարի այծյամները, յեղնիկները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Բաղի, ցանքսի յեկամուտը Թե վոր պիտի միշտ  
բեկերը տեսնեյին,  
Սերմը ցանող անխոնջ յերկրագործները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Աշխատանքը ոսնչպարինն ե, ուժը յեզան, խակ հողը  
ըստ վաճնն ե,  
Ել բեկզաղաները, բեկ ու խաները ինչիդ եյին պետք,  
աստվա՛ծ:

Թե վոր ամբողջ աշխարհումը ազիտությունն ու  
խախտը պիտի իշխեր,  
Ել լուսավոր ու կրթված գիտնականները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Սյուրթուկավոր մուսուլմանին քյաֆուր անխամբ  
անվանարկող, հախոյող,  
Դուշիկավոր,\*) հնամուլ մուսուլմանները ինչիդ եյին  
պետք, աստվա՛ծ:

Կամ ել յեթե նրանք պիտի ունենային խոսք ու անուն  
ազդեցիկ,  
Ել այս չորս-հինգ իմաստուն ուսումնականները  
ինչիդ եյին պետք, աստվա՛ծ:

\*) Դուշիկ—թուրքական հին ձևի հագուստ:

Թե դեյրաթով գործի անցած պիտի ախարան  
դանոսբազներ\*) լինեյին,  
եւ թամբալ, խենթ քաջերը, սատանաները ինչիդ  
եյին պետք, աստված:

Թե վոր ամեն մի տղամարդ, աղջկա պես պիտի սիրելի  
տղայի,  
եւ տներում փակված կանայք, տիկիները ինչիդ  
եյին պետք, աստված:

Թե մեր ըտրք վաճառականները պիտի Սոնյաներին  
գտնեյին,  
Բա եւ անբախտ ու թշվառ Թուրքազբաններ\*\*)  
ինչիդ եյին պետք, աստված:

Մեղա քեզ, տե՛ր, մեղա քեզ, տե՛ր, մեղա քեզ,  
տե՛ր, մեղա աստված:  
Նայելով ըս արարքներին զարմանում եմ՝ բերանս  
բաց:

Թարգմ. ԳՐԱՇԻ

\*) Դանոսբազ—լրտես:  
\*\*) Թուրքազբան—թուրք գեղջուկ կնոջ անուն:

\* \* \*

- Գուցե քնած ես, ազիզ բարեկամ:
- Ո, վո՛չ. համեցե՛ք... հուզված ես դու խիստ...
- Տասներկու մանեթ փողի կարիք կա...
- Ձե՛, խոր քնած եմ... թողեք ինձ հանգիստ:

Թարգմ. Թ. ՀՈՒՐՅԱՆ

# Դ Ի Լ Ա Ն Չ Ի

Դե, ուղե ելի, հերիք վրոնաս շեմքում նստած, դի-  
լանչի,  
Ել մի կանչիր բարյուշի սեւ, մի վնդստա, դիլանչի:

Թեև դիւի ել քելեխ ա ես պատվասեղանն—<sup>ո՞ւմ</sup> ինչ  
դործ,  
Թեյեվ լիքն ա տեսակ—տեսակ ուտելեղանն—<sup>ո՞ւմ</sup> ինչ  
դործ.  
Ու մեջլիսն ես թեև աղքատ մարդու տեղ ա—<sup>ո՞ւմ</sup> ինչ  
դործ.

Սակայն կա և աղաթ մի հին, ալա, խաստա  
դիլանչի,  
Դե, ուղե ելի, շեմքում նստած մի վնդստա, դիլանչի:

Մենք հարուստ ենք, մեր ապրուստը աշխարհումս  
անդին ա,  
Մեր զոնաղն ել մեզ սեւ ուրախ, դովլաթատեր  
դանդին ա,  
Հաստավիղ ա, աղնվական, փորը մեծ ա, հանդին ա,  
Բեկ ու խան ա, մոլլա յա, տես, զառ խալաթն ել  
հազին ա,  
Մեր կերածն ել թանկադին ա՝ համով դառն ու  
մաքին ա.

Ել մի անկի խհանոցին աչք, աղա, դիլանչի,  
Դե, ուղե ելի, շեմքում նստած մի վնդստա, դիլանչի:

Մեզ ինչ թե քո ձեռքը եսոր դեռ չի ընկել մի բուռ  
հաց,  
Կամ թե սովից ընտանիքդ միշտ անուճ ա ախ ու  
լաց,  
Մի տես, թե ինչ զգվելի ա քիթ—մուկթդ մրոտած.

Թու քո ջանին, քո յերեսին եղ լպստած, դիլանչի,  
Դե, ուղե ելի, շեմքում նստած մի վնդստա, դիլանչի:

Հարուստն, ախր, ինչի՞ պիտի, թողած մոլլա ու  
խանի,  
Կշտացնի աղքատների ենքան սոված ընտանիք:  
Ինքը՝ տերը թող անամոթ եղ քո գլխին ճար անի.

Բաց թող յախես, քո ճակատը ես ի՞նչ հաստ ա,  
դիլանչի,  
Դե ուղե ելի, շեմքում նստած մի վնդստա, դիլանչի:

Մի անգամից հասկացիր, վոր աղքատ ես դու բնածին  
Յեվ մի անկիր քո աչքը ծակ հարուստների  
յեխածին,  
Թե վոր չունես ուտելու բան — մեռիր՝ վերջ դիր քո  
լացին.

Մեզ մի տանջիր, ու մի յեղիր եղպես վստահ,  
դիլանչի,  
Դե, ուղե ելի, շեմքում նստած մի վնդստա, դիլանչի:

Հարուստի մոտ պատկանան մարդ աղքատը Հար  
չի լինի,  
Աղքատն իրա որում իսկի խանի պես սար չի լինի,  
Կուշտը ցերքեք սովածին մոտ ու հավասար չի լինի:

Թե չե տեսար՝ ընկա՛վ նրա փառքը հսկա, գիլանչի,  
Գե ուղ ելի, չեմքում նստած մի վնգստա, գիլանչի:

Թարգ. ՍՍՄՎԵԼ

Ա. Խ..

Հե՛յ գիտի, ա՛խ... քե՛ֆ քաշելու այամ եր,  
Են ժամանակ, յերբ մեր հոտը դեռ խամ եր:

Ժողովուրդն էր իրավունքը չգիտեր,  
Ազատ մտքից հեռու յեր ու ազեա եր,  
Աչք չեր սրբում, թեև արցունքը գետ եր,  
Թերթ չեր կարդում, գերի յեր նա ու հեա եր,  
Լսածն ել ի՞նչ, սուտլիկ-սնտտի բան եր,  
Հեյ գիտի, ախ... քե՛ֆ քաշելու այամ եր:

Վոչ վոք յերկրում մեղ չեր թքում, պարսավում,  
Ինչ անեյինք, մաքուր եյինք յերեվում,  
Խալխի աչքին սրբեր եյինք մենք թվում,  
Ինչ գեղեցիկ հուրմայթ-պատիվ կար մեզնում,  
Մեղ հարգողը, ինքը ամբողջ խաւամն եր,  
Հեյ գիտի, ախ... քե՛ֆ քաշելու այամ եր:

Յերբ ազն ընկներ վշտի մեջը, մենք գոհ, բավական  
եյինք,  
Իշխանության, իշխաններին յեղբայր - ոգնական  
եյինք,  
Խալխի աչքում գիրբա եյինք, սուրբ աղոթարան  
եյինք,  
Վորտեղ փլավ լիներ, ենտեղ սուսիբի գլխին խան  
եյինք:

Գիշեր, ցերեկ մեզ համար տոն, բայրամ եր,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսամ եր:

Ընչքան ել վոր մեր գործերը կեղծ եյին,  
Թվում եյին, թե մաքուր, անեղծ եյին,  
Կարծում եյին մեր խոսքերն անկեղծ եյին,  
Դիփի համար որենք, սրբաստեղծ եյին:  
Ուրիսի գործն եր—սլատվել, մեղ դովարանել,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսամ եր:

Մեր կեղծիքը ծածկում եր արան—չորը,  
Ինչ գալիս եր, կոխում եյինք մեր փորը,  
Ով գիտեր, թե մի մեծ խարդախ ե մոլլան,  
Հիվանդ մարդուն ղեղ եր հողը մեր դռան:  
Մեր ապաստարանն ուխտավայր, աղոթարան եր,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսամ եր:

Ուրիս մեղ եր վստահում լուռ, հնազանդ,  
Մեղ եր կանչում «ծերունիներ սրբազան»,  
Չեր տարբերում մութը լույսից հարազատ,  
Մեր գրպանն եր լցնում դատածն իր դատ—դատ:  
Ով փող չտար՝ իրեն խայտառակ կաներ,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսամ եր:

Հիմի ասես բոլոր մարդիկ քաջքեր են,  
Քաջքը ի՞նչ է, սատանայի ճտեր են,  
Մեզ բոլորիս ձի յեն շինել, նստել են,  
Անցած այսամ, ո՞ւր ե, հիմի լիներ են  
Աշխարհը շեն, յերբ մեր հորը դեռ խամ եր,  
Հեյ գիտի, ախ... քեֆ քաշելու այսամ եր:

Թարգմ. ԳՐԱՇԻ

## Ե Յ Ա Մ Ի

Յես չեմ խարսի քո քարոզով — նահախ ե նա, եյ  
ամի,  
Թող ինձ պատժի քո հավատը, թե հախ ե նա, եյ  
ամի,

Միշտ յերդվելով քո խմանով՝ թալանում ես դու  
մարդկանց,  
Ավագակի ղենք ե ղինդ, մի վախենա, եյ ամի:

Ձուր մի ներկիր քո մորուքը, մի ղիր խինա քո  
մաղին,  
Քո հողու չափ սեվ չի դառնա, չի փոխվի նա, եյ  
ամի,

Թե վոր ոգուտ չունենայիր քո եղ որուջ—նամագից,  
Չեյիր տանի են թուքը, վոր քո գլխին ար, եյ ամի:  
Ի՞նչ ես դու միշտ աչքս խոթում եղ նամաղը քո  
ղաղիր,

Դու քո տված ոգուտն ասա՝ ասեմ հախն ար, եյ ամի:

Թարգմ. ՍԱՄՎԵԼ

# ՄՈԼԼԱՅԻ ԴԱՐԴԸ

Ախ քաշելս՝ քեֆի-դելյանի համար ե,  
Արյուն լալս՝ դահֆե-ֆինջանի համար ե,

Գարող տալս՝ լոկ պարգեպի, լոկ քելեխի,  
Իմ քիսայի, իմ լիք գրպանի համար ե:

Նպատակս՝ կալին ցորեն հախաքելն ե,  
Հիանալս՝ իմ մալ, մառանի համար ե:

Ամեն մի սր քո վոտքերիդ տակ փռվելս,  
Լիքը սուփրիդ, լիքը դազանի համար ե:

Յես հիվանդ եմ քյուֆթա, բողբաշի դարդիցը,  
Խորովելս՝ դոլմա, պատմջանի համար ե:

Գովքս՝ դրախտի անմահական աղբյուրների,  
Անուշ ջրի, շարբաթ, ոեհանի համար ե:

Տեսա դուք միլավ եք յեփում, հասկացա վոր  
Թաղարիքն այդ քելեխ, նշանի համար ե:

Յերանի թե տեսնեյի քեզ, քաղցր ժառանգ,  
Ուշքս, միտքս քո դանձ, քարվանի համար ե:

Հարուստներին հողի տուր, սի՛րտ, խեղճերին՝ քար,  
Բաղցր խոսքս՝ սուլթան ու խանի համար ե,

Բարկությունդ մեզ վրա չի ազդի «Հոպ-հո'պ»,  
Կրակը լոկ այրվող քո ջանի համար ե:

Միշտ այրվի՛ր, ձեն մի հանի, դու քո աստվածը,  
Հասկացի՛ր, ձեն մի հանի, դու քո աստվածը,

Արդար խոսած, արդար դատած ել լինես,  
Ուրացի՛ր, ձեն մի՛ հանիր, դու քո աստվածը:

Թարգմ. ԳՐԱՇԻ

# ՄՏԱՍԱՆ ԶՈՒՄԱՆԸ

Մի չոբան սարից ձեն տվեց. «Հարա՛յ, Հա՛յ, հասե՛ք, գելը վոչխարը տարա՛վ...»

Յեւան գյուղացիք ջահել ու պառավ,  
Վազեցին—փայտ ու մահակներ առած:

Յեւ մարդիկ վռազ վազեցին սարը,  
Վոր փրկեն գելից գառն ու վոչխարը:

Վազեցին խմբով ու սարը հասան,  
Ու սարը հասան...հասան ի՞նչ տեղան:

Չոբանը կանդնած խնդում է քահ-քահ,  
Վոր մարդիկ եսքան անխելք են, ախմա՛խ:

Վոր եսքան մարդկանց նա կարաց խաբել,  
Յեւ եսքան մարդկանց կարճ խելքը չափել:

«Իե՞ֆս յեկել եր, զարաֆաթ արի,  
Վոնց բարի յեկաք, գնացե՛ք բարի»,—

Ասաց չոբանը, վոչխարը առավ,  
Ոնդալով քահ-քահ յետ սարը տարավ:

Եսպես անց կացան որեւ մի քանի,  
Բայց չմոռացան մարդիկ չոբանի

Չար զարաֆաթը...յերբ մի որ նորից,  
Ելի չոբանը ձեն տվեց սարից՝

«Ե՛յ, հարա՛յ, հասե՛ք, վոչխարը կերան,  
Գելերը...յեկա՛ն, ձե՛ղ մատաղ, տարա՛ն...»

Գեղացիք, հասե՛ք... ողնությո՛ւն...» սակայն  
Վո՛չ մի գյուղացի տնից դուրս չեկավ:

«Սո՛ւտ ե—ասացին—ո՞վ չի ճանաչում...  
Սո՛ւտ ե, չոբանը սուտ տեղն է կանչում»:

Իսկ սարում՝ ճիշտ վոր, գելեր մի քանի  
Վրա տվեցին հոտին չոբանի,—

Վորին խեղդեցին և կերան վորին,  
Գետին փռեցին անշունչ բոլորին:

Ենպես վոր հոտից մե՛կն էլ չմնաց  
Ու գյուղին հասավ եսքան մեծ վնաս:

\* \* \*

Յեւ ճիշտ և ստիճ. «Չե՛ն էլ հապատում,  
Թե տո՛ւնն էլ վառվի սուտ ասող մարդու...»:

Թարգմ. Թ. ՀՈՒՐՅԱՆ

## ԳԱՐՆԱՆ, ՈՐԵՐ

Յեկեք դարնան վա՛ռ որեր,  
Տարվա սիրուն, զա՛ռ որեր:

Հարվի ձյունը սարերի,  
Բացվի գու՛նը բաղերի:

Գետը առուն սե՛լ լինի,  
Ու հատլը թե՛լ-թե՛լ լինի:

Բացվեն կանաչ ու ծաղիկ,  
Ծառ ու տերև ծիծաղեն:

Թարգմ. Թ. ՀՈՒՐՅԱՆ

## ԻՍԿԵՆԴԵՐՆ ՈՒ ԱՂՔԱՍԸ

Ջերմ արևի տակ մով տիեզերքի՝  
Աղքատն եր նստել ճամբի յեզերքին:

Նստել եր մենակ ու ճանճերն են չար  
Տանջում է յին խեղճ մարդուն չարաչար:

Մեկ ել՝ են ճամբով Իսքենդերն անցավ,  
Նայեց աղքատին, խղճաց ու ասավ. —

— Այ աղքատ, պատմիր, քեզ ի՞նչն է հուզում  
Յեզ ի՞նչ է հիմա քո սիրտը ուզում:

Յես դարման կանեմ քո ցավին անճար,  
Բո սեզ դարդերին կանեմ դեզ ու ճար:

— Փաղիչահ, — ասաց աղքատը հանդիստ, —  
Ճանճերի դեմ է իմ դանդատը խիստ,

Հրամայիր և թող ճանճերն ես անահ  
Չքվեն ու կորչեն, հողիս դնջանահ:

— Այ մարդ, ենպես բան ուզիր ինձանից,  
Վոր կախված լինի իմ հրամանից:

Յես ճանճերի դեմ անդոր եմ սաստիկ,  
Իսկ իմ դորությամբ նրանց չես սաստիկ:

— Փառելիչահ, թե վոր խեղճ էս ու անճար,  
Ել ինչո՞ւ առիր, թե կանեմ քեզ ճար:

Դու վոր քեզ անհաղթ, քաջ էս համարում,  
Ասա, ճանճից թույլ ի՞նչ կա աշխարհում:

Թե վոր անգոր էս ճանճերից անգամ,  
Ել ինչո՞ւ քեզ մոտ ողնության յես դամ:

— Այ վորդի, զնա, դու ասծուն դիմի,  
Նրանից խնդրիր ողնություն հիմի,

Նա՛ կանի դարդին քո դարման ու դեղ,  
Ասծուն են դիմում թե թույլ, թե ուժեղ:

Թարգմ. ՍԱՄԱԵԼ

## Փ Ո Ղ Ը

Մարդուն մարդու դեմք տվողը փողն է միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն է միշտ...

Թող վոչ ցեղը լինի վսեմ,  
Վոչ ել սիրտդ պարզ ու լուսեմ.

Անունդ թող դրեն սևում,  
Միայն թե քեզ հարուստ ասեն:

Մարդուն մարդու դեմք տվողը փողն է միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն է միշտ...

Յեղիք անխելք ու անխարող,  
Բայց ունեցիր կարվածք ու հող,

Հիմարները հողիդ վրա  
Ծունկի կդան միշտ դողեղող:

Մարդուն մարդու դեմք տվողը փողն է միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն է միշտ...

Գու՛թ չլինի թող քո հողում,

Մարդկանց արյուն ծծես անքուն —

Գրսանումը թե փող ունես,

Աղնիվ մարդ էս դու աշխարհում:

Մարդուն մարդու դեմք տվողը փողն է միշտ,  
Անփող մարդու յերեսին սև քողն է միշտ:

Թարգմ.՝ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

# Ի Ն Չ Գ Ր Ե Մ

Բանաստեղծ եմ, իմ պաշտոնը ես ե — վրտանավոր  
գրեմ,  
Թե լավ, թե վատ, ինչ տեսնում եմ, յես հանդ ու  
վանկավոր գրեմ,  
Արեւիլը լույս, որն սպիտակ, գիշերը սեւավոր գրեմ,  
Վատը միշտ վատ, ծուռը միշտ ծուռ, շխտակը  
լուսավոր գրեմ:

Բաս ինչու յես, ով ընթերցող, աչքդ չուում ու  
զայրանում,  
Չլինի՞ թե ես հայելում դեմքդ ծուռ ե պատկերանում:

Տարված յերգով, իմ ցավերով, իմ հովերով, յես  
վերցնում եմ,  
Դնում եմ կողքիս թանաքս ու թղթերս և փորձում եմ  
Մի խոսք գրել — մեկ էլ հանկարծ իմ ձեռքիցը դու  
բռնում ես,  
Յես դողում եմ, վորովհետև դալիս, լեզուս դու  
կտրում ես:

Դե լավ, յես հո ճշմարտության ճանապարհը չեմ  
ծումբում,  
Դեռ իմ բոլոր տեսածներից չորսից մեկն էլ յես չեմ  
գրում:

Դեռ չեմ գրում չորսից մեկն էլ, մի քո արարքներից  
նայիր,  
Հայհոյում ես ինձ ամեն սր, դու մի քո բարքերից  
նայիր,  
Մի խղճի յեկ, գաղափարիդ, քո սարք ու կարգերիդ  
նայիր,  
Չես ուզենա վոր յես գրեմ, քո արատ-վարքերիդ  
նայիր:

Մարդ սրարած, արատդ տես, և իզուր մի սրվի ինձ  
հետ,  
Այդ հարցում յեկ, բիրտ մի նեղի և իզուր մի կոպի  
ինձ հետ:

Գրողները միշտ տեսնում են նպատակը ձեր  
վերջնական,  
Ինձնից նրանք շատ կարող են տալ ձեր հարը ձիշտ,  
իրական,  
Բայց չեն գրում արարքներիդ տաս և չորսից մեկը  
անգամ,  
Դուք եք նրանց գրել տալիս վարքը, բարքը ձեր  
սեփական:

Սակայն գուցե աշխարհում այդ արատներից զե՞ր՞ծ են  
նրանք,  
Նման ստոր գրածներից բարձր, անհաս քե՞ր՞ծ են  
նրանք:

Ինչպես վոր յես չորսից մեկը գրելու անդոր,  
անկար եմ,  
Վախենում ե տաս և չորսից մեկն էլ գրել գրող  
քանքարն են,

Թե խոսք կտաս «մի վախենա, քեզ չենք թողնի  
եւ խանդարեն»  
Յեա եւ, ինչ կա, թե լավ, թե վատ, թե վոր շխտակ  
գրեմ, շարեմ,—

Են վախար են հայր կնկնես, վոր քս կյանքը դուզ  
կես կլի,  
Շոր չես գտնի գու հագներու, և աստուք յերես կլի:

Թարգմ. ԳՐԱՇԻ

## ՄԻ ԹՈՂ, ՅԵԿԱՎ

Խանդասար, աման, մի թող, յեկավ,  
Վարժունքն և յաման, մի թող, յեկավ:

Վայ, վայ, ասես թե իսկի մարդ չե աս,  
Անճոռնի, անմխտ, ո՞ր, մի արջ և աս,  
Աման, ինձ համար տղամարդ չե աս:

Վարսդ և թամամ, մի թող, յեկավ,  
Վարժունքն և յաման, մի թող, յեկավ:

Նշանի որը ամոթից լացի,  
Ջահել և—ասիք—յես հաճատացի,  
Բա, մարդս ե՞ս եր—հիմի իմացի:

Խանդասար, աման, մի թող, յեկավ,  
Վարժունքն և յաման, մի թող, յեկավ:

Աման, վախեցա, պատովեց լեղիս,  
Կծկվեց սիրտս ու կախվեց թելից,  
Թողրաց հոգիս, դուրս յեկավ տեղից:

Այրվեցի, աման, մի թող, յեկավ,  
Վարժունքն և յաման, մի թող, յեկավ:

Ճերմակ մազերն են վաչյում կզակին,  
Նայեք մի սրա գլխի թասակին,  
Ախ, շատ և պառտվ—պատիս հասակին:

Մեռել և թամամ, մի թող յեկազ,  
Վարձունքն և յաման, մի թող, յեկազ:

Ձգվում եմ բերնից հոսող ջրիցը,  
Ես ինչ վատ հոտ և գալիս վրիցը,  
Ատելի յե ինձ խոսքն ու զրիցը:

Մի ոճ և թամամ, մի թող, յեկազ,  
Վարձունքն և յաման, մի թող, յեկազ:

Թարգմ. ՍԱՄՎԵԼ

## Հ Ե Յ Փ Ո Ղ

Դու իմ աչքի լո՛ււյսն ես, հեյ փող, դու ջա՞նա ես,  
դու տո՞ւնս ես,  
Սրբությո՞ւնս, նամո՞ւսս ես, դեյրա՞թս ես,  
արթո՞ւնս ես,  
Հարզա՞նքս ես, պարծա՞նքս ես, հուշա՞կս ես,  
անո՞ւնս ես,  
Ղուրա՞նս ես, Մեդի՞նա՞ս ես, Մեկկա՞ս, դիբլա՞ս,  
հենարա՞նս,  
Կրո՞նս ես, հավա՞սս ես, դավանա՞նքս, քաղաքա՞նս:

Կյանքս առցալ բեզ դիպելու հոգսերի մեջ միշտ  
բեկղձված,  
Դարդասոյիցի ու մնացի անկողնու մեջ հիվանդ  
ընկած,  
Սիրտս հետդ և, թեկուզ լինեմ ես աշխարհից յես  
վերացած,  
Դու կյա՞նքս ես, բերկրա՞նքս ես, Եյությո՞ւնս,  
հենարա՞նս,  
Կրո՞նս ես, հավա՞սս ես, դավանա՞նքս, քաղաքա՞նս:

Հե՛յ, այ գալում, հենց փոր ճամբիդ մի ուր դարձա  
յես ջանՖիդա,  
Ձհագեցա ել բեզանից, բեզնից քաղցր ջան չգտա,  
Ժառանգներս հիմա խոնաված, բեզ փոնց ավար, դիփ  
չաղ կատն,

Ճառանգի՞նս ես, թե՛ դու թ՞մա ես, իմ գրպանի մայր-  
 ապրանքըս,  
 Կրո՞նս ես, հափա՞նս ես, բափարա՞նս, դափանա՞նքս -  
 Ճառանգներս, ինձ պե՞ս, քեզ չե՞ն դասի յերբեք իմ  
 սունդուկում,  
 Ամեն՞ն մեկը քեզ կոխո՞ւի հազար մի անգ, բեֆ-  
 ինձու՞քում,  
 Ռեսուրսանե՞ր-կյուրե՞նքում, քեզ ցի՞ր ու ցան՞ կտան  
 բամու՞նս,  
 Ամեն՞ հասնոց քեզ կծա՞նի, դու մի՞սս ես, թե  
 աբխո՞ւնս,  
 Կրո՞նս ես, հափա՞նս ես, դափանա՞նքս, թե՛ անա՞նս -  
 իմ սիրելի՛, ալսու՞հեան քո սերջը—վախճանն է  
 արդե՞ն,  
 Այսպիսով քո ցավի անցը՞ իմ սիրտը, իմ ջանն է  
 արդե՞ն,  
 Միտքս, հոգիս քեզ է դուրբան, քո բող ու բազանն է  
 արդե՞ն,  
 Դու ինձ գլուխոց սիրու՞նի՞ս ես, նազելի՞ս ես,  
 հե՛նարա՞նս,  
 Կրո՞նս ես, հափա՞նս ես, դափանա՞նքս, բափարա՞նս -  
 Բեզե՞ից յես ձեռք չե՛լի բաշի, թե՛ ու՞մ յինեք  
 մարտակյու,  
 Մահն էլ կգա՞՛ հրաման կտա՞՛ ինձ քեզանից  
 հե՛տանդու,  
 Բաց իմ ջանըք վշելիս էլ յես էլի՞ յե՛մ բարբառելու  
 Դու իմ աչքիս յո՞ւրան ես, հե՛լ վոց, իմ հոգի՞ս ես,  
 հե՛նարա՞նս,  
 Կրո՞նս ես, հափա՞նս ես, դափանա՞նքս, բափարա՞նս -  
 Թարգմ. ԳՐԱՆԻ



ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Ալեքսեյ Թահիր Զադե Սաբիր	Շամիրով	3
Ալեքսեյ Թահիր զադե Սաբիրի կենսագրությունը	Շամիրով	13
<b>ԱՐԱՐԻԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ</b>		

Բեյնեյմիլի	Թարգմ. Վ. Ալաաջան	31
Բեզ ինսան ես իմանում	» Սամվել	34
Բաղվի ֆանտաստիկ	» Գրաչի	37
Աքինչի	» Սամվել	39
Համբերիք	» Գրաչի	42
Ինչից է յին պետք, սատված	» Գրաչի	46
* * *	» Թ. Հուրյան	49
Իլիանչի	» Սամվել	50
Ա՛խ	» Գրաչի	53
Ե՛լ սոխ	» Սամվել	55
Մալաջի գարգը	» Գրաչի	56
Սասանն չորանք	» Թ. Հուրյան	58
Գարնան արեք	» Թ. Հուրյան	60
Խոքեղերն ու աղբատը	» Սամվել	61
Փողը	» Հ. Մահյան	63
Ինչ պե՞մ	» Գրաչի	64
Մի թող, յեկան	» Սամվել	67
Ե՛լ սոխ	» Գրաչի	69





«Ազգային գրադարան»



NL0389772

4170 30 4.

30 p

1389

73882

4/120

up 1  
m 2

---

Алекпер Таирзаде Сабир

---